

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

4 ապրիլի 2016 թ.

N 97-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների ցանկը հաստատելու մասին» N 268-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 113-րդ, 114-րդ, 115-րդ, 116-րդ, 117-րդ, 118-րդ, 119-րդ, 120-րդ, 121-րդ, 122-րդ, 123-րդ, 124-րդ և 125-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

113.	Թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդության նկատմամբ կենդանի, չոր «ԱվիՊրո ԻԲ Հ120» (AviPro IB H120) պատվաստանյութ	Գերմանիա	«Լոհմանն Անիմալ Հելթ ԳմբՀ» կազմակերպություն
114.	Հորթերի ռոտավիրուս և կորոնավիրուս հիվանդությունների նկատմամբ կենդանի Կաֆ-Գարդ (Calf-Guard) պատվաստանյութ լուծիչով	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	«Զօլտիս Ինկ.» կազմակերպություն
115.	Խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախեիտ, փորլուծություն, պարագրիպ-3, շնչառական սինցիտիալ վարակի և պաստերելեոզ հիվանդությունների նկատմամբ Բովի-Շիլդ Գոլդ Վան Շոտ (BOVI-SHIELD GOLD ONE SHOT) պատվաստանյութ լուծիչով	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	«Զօլտիս Ինկ.» կազմակերպություն
116.	Խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախեիտ, փորլուծություն, պարագրիպ-3, շնչառական սինցիտիալ վարակի և լեպտոսպիրոզ հիվանդությունների նկատմամբ Բովի-Շիլդ Գոլդ ՖՊ 5 Լ5 (Bovi-Shield GOLD FP 5 L5) պատվաստանյութ լուծիչով	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	«Զօլտիս Ինկ.» կազմակերպություն
117.	Խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախեիտ, փորլուծություն, պարագրիպ-3, շնչառական սինցիտիալ վարակի և լեպտոսպիրոզ հիվանդությունների նկատմամբ Բովի-Շիլդ Գոլդ ՖՊ 5 Լ5 ՀԲ (Bovi-Shield GOLD FP 5 L5 HB) պատվաստանյութ լուծիչով	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	«Զօլտիս Ինկ.» կազմակերպություն

118.	Խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախեիտ, վիրուսային դիարեայի, պարագրիպ-3, ռեսպիրատոր սինտիցիալ և լեպտոսպիրոզ հիվանդությունների նկատմամբ Քեթլվակ Էքսպրեսս ՖՊ 10 (Cattlevac Express FP 10) պատվաստանյութ	Գերմանիա	«Բոեհրինգեր Ինգելիեիմ Վետմեդիկա ԳմբՀ.» կազմակերպություն
119.	Խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախեիտ, վիրուսային դիարեայի, պարագրիպ-3 և ռեսպիրատոր սինտիցիալ հիվանդությունների նկատմամբ Քեթլվակ Էքսպրեսս ՖՊ 5 (Cattlevac Express FP 5) պատվաստանյութ	Գերմանիա	«Բոեհրինգեր Ինգելիեիմ Վետմեդիկա ԳմբՀ.» կազմակերպություն
120.	Խոզերի ռեպրոդուկտիվ ռեսպիրատոր սինդրոմի նկատմամբ Ինգելվակ ՊՌՌՖԼԵՄ ԵՈՒ (Ingelvac PRRSFLEX EU) պատվաստանյութ	Գերմանիա	«Բոեհրինգեր Ինգելիեիմ Վետմեդիկա ԳմբՀ.» կազմակերպություն
121.	Խոզերի ռեպրոդուկտիվ ռեսպիրատոր սինդրոմի նկատմամբ Ռեպրոցիկ ՊՌՌՍ ԵՈՒ (ReproCyc PRRS EU) պատվաստանյութ	Գերմանիա	«Բոեհրինգեր Ինգելիեիմ Վետմեդիկա ԳմբՀ.» կազմակերպություն
122.	Խոզերի կարմրախտի, պարվովիրուս վարակի և լեպտոսպիրոզ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Պորցիլիս Երի+Պարվո+Լեպտո (Porcilis Ery+Parvo+Lepto) պատվաստանյութ	Նիդերլանդներ	«Ինտերվետ Ինթերնեյշնլ Բ.Վ.» կազմակերպություն
123.	Թռչունների ռեովիրուս հիվանդության նկատմամբ կենդանի, չոր «Վաքս:օն ՌԵՈՎԻՐՈՒՍ» (Vaxxon REOVIRUS)	Իտալիա	«Իգօ Ս.ռ.լ.» կազմակերպություն
124.	Խոզերի ցիրկովիրուս վարակի և վերարտադրողական-շնչառական համախտանիշի նկատմամբ ակտիվազրկված, էմուլգացված ՊՍՍՕՍ ՊՍՎ2 և ՊՌՌՍ (PCCOM PCV2 and PRRS)	Թայվան	«Ռեբեր Ջենետիքս Կո.» կազմակերպություն
125.	Խոզերի ցիրկովիրուս վարակի նկատմամբ ակտիվազրկված, էմուլգացված Ցիրկոֆրի ՊՍՎ2 (Circofree PCV2)	Թայվան	«Ռեբեր Ջենետիքս Կո.» կազմակերպություն

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Ս. Կարապետյան